ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 փետրվարի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

14
(2864)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻ ԱՆՀԱՅՏ ՓՈՂԵՐԸ

Երեւանի փոխքաղաքապետի օգնականը 2.5 մլն դրամ է փոխանցել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը իբրեւ նվիրատվություն: Կոռուպցիայի դեմ պայքարող հեղափոխականներին այս թվերը չեն հետաքրքրում: Վերջին շրջանում «Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար հրապարակում է նախորդ տարի՝ հուլիսի 31-ին տեղի ունեցած՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաքի մանրամասները: Ինչպես հայտնի է, Հայաստանի բոլոր խոշոր գործարարներին «հանձնարարված է եղել» կլորիկ գումարներ հանգանակել իշխանական կուսակցությանը: ՔՊ-ի դրամահավաք-երեկոյին 996 նվիրատուների հանգանակությունների արդյունքում հավաքվել է շուրջ 509 մլն 085 հազար 950 ՀՀ դրամ, այսինքն՝ 1 մլն 262 հազար 681 դոլար, սակայն շատ նվիրատուների անունները գաղտնի են պահվել: ՔՊ-ի դրամահավաքին, ինչպես արդեն գրել էինք, հանգանակություններ էին արել «Բաս վոյաժ» ՍՊԸ-ն՝ 700 հազար դրամ, ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության պետ Գոռ Բակլաչյանը՝ 250 հազար դրամ, ՔՊ խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանը՝ 100 հազար դրամ, Երեւանի քաղաքապետարանի շինբարեկարգման վարչության նախկին պետ Խորեն Գրիգորյանը՝ 2 մլն դրամ, Երեւանի ավագանու անդամ Արմեն Կոտոյանը՝ 1 մլն դրամ, եւ այլ հետաքրքիր դեմքեր: Այս անգամ ներկայացնում ենք ցուցակի հաջորդ հետաքրքիր քառյակին: ՔՊ-ի դրամահավաքին 200 հազար դրամ հանգանակել է Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը:

Սեպտեմբերի 17-ին կայացած՝ Երեւանի ավագանու ընտրություններին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի անդամ Գեղամ Բրսոյանը ամենաշռայլ նվիրատուներից էր, որը հանգանակել է 2 մլն 500 հազար դրամ: Բանն այն է, որ նման շռայլություն դրսեւորելուց հետո նա, ՔՊ ցուցակում լինելով հանդերձ, չընդգրկվեց Երեւանի ավագանու ցանկում: ՔՊ ավագանու ընտրացուցակում ընդգրկված եւ ավագանու անդամ չդարձած Շողիկ Վիրաբյանը եւս 2 մլն 500 հազար դրամ է հանգանակել: 2 մլն 500 հազար դրամ էլ ՔՊ դրամահավաքին հանգանակել է 2022 թվականի ապրիլի 20-ին ՀՀ ԱԻ նախարարի օգնական նշանակված Տաթեւ Հակոբյանը: Բանն այն է, որ Տաթեւ Հակոբյանն այժմ հանդես է գալիս Տաթեւ Մարգարյան անուն-ազգանունով: Նա այն ժամանակ ԱԺ պատգամավոր Արմեն Փամբուխչյանի օգնականն էր, հետո, երբ Փամբուխչյանը նշանակվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար, Տաթեւ Մարգարյանին իր հետ տարավ: Նույնը կատարվեց, երբ Փամբուխչյանն ընտրվեց Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ. Տաթեւ Մարգարյանին կրկին նշանակեց իր օգնական: Հետաքրքիր է՝ օգնականին որտեղից նման գումարներ, որ փոխանցել է: Այս հարցն էլ փորձեցինք պարզել Տաթեւ Մարգարյանից, որը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց. «Ճիշտ է, ես այդքան հարուստ չեմ: Քանի որ շտաբում էի, կազմակերպչական հարցերով պատասխանատու ու ակտիվ աշխատանքների մեջ էի, ընկերներ, կուսակցականներ, լիքը մարդ հավաքվեց, կպանք իրար, ես իջա արեցի»: Հետաքրքիր է՝ արդյոք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը որեւէ ընթացք կտա նման երեւույթներին եւ կխորանա ՔՊ դրամահավաքի պաշտոնյա նվիրատուների ֆինանսական աղբյուրները բացահայտելու գործով:

Դեռ 2019 թվականից էր բուհերի խոշորացման մասին շրջանառվող հայեցակարգի նախագիծը քննարկվում: Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը համալսարանների միավորման եւ Ակադեմիական քաղաքի կառուցման համար դեռ նախորդ տարի՝ հուլիս ամսից ՀՀ պետական բուհեր եւ գիտահետազոտական կազմակերպություններ էր ուղարկել հայեցակարգ: Բուհերին հանձնարարված է եղել նամակին պատասխանել մինչեւ 2024 թվականի փետրվարի 15-ը: Բանն այն է, որ մինչ այսօր ՀՀ պետական բուհերից եւ գիտահետազոտական կազմակերպություններից նամակին արձագանքել են ընդամենը 2 բուհ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը եւ ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ Լուսինե Գրիգորյանը նշեց, որ նշված բուհերն են պատասխանատու եղել պատասխանել: «Որոշակի մոտեցում այս բուհերը ներկայացրել են, դրական, թե ոչ, չեմ կարող ասել: Տնտեսագիտական համալսարանն իր հիմնավորումներն է բերել: Այս բուհերի պատասխանը ցույց է տալիս նրանց պատասխանատվության մասին»: Հավելենք նաեւ, որ նշված հայեցակարգն իրենից ենթադրում է բուհերի խոշորացում եւ գիտահետազոտական կազմակերպությունների միավորում: Միավորումն իրականացվել է մի քանի ուղղությամբ՝ դասական, բժշկական, տեխնոլոգիական, կրթական, արվեստների եւ սպայական: Հայեցակարգի վերաբերյալ 8 ամսվա ընթացքում արձագանք է ներկայացրել 2 բուհ: Նույնիսկ բուհերի կողմից պատասխան չուղարկելն է պատասխան, քանի որ բազմիցս ենք նկատում, թե համալսարաններում եւ՛ ուսանողների, եւ՛ դասախոսների կողմից ինչպիսի կոպիտ արձագանք է հնչում բուհերի միացման վերաբերյալ:



Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները պատրաստվում են երաշխավորություն ներկայացնել խորհրդարանի նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր՝ Կառլեն Սիմոնյանի կնոջ՝ Անի Գեւորգյանի, «Սիներջի» ընկերության բիզնեսի զարգացման կառավարիչ Լիլի Մկրյանի եւ ընկերության տնօրեն Աշոտ Հովհաննիսյանի մասով: Պատգամավորները, չճանաչելով այս անձանց, որոշել են երաշխավորել, որ նրանք չեն թաքնվի քննությունից եւ չեն խոչընդոտի: Իշխանականներն այս հարցը քննարկել են ԱԺ երեկ կայացած խորհրդի նիստի ժամանակ ու երեկվանից ստորագրահավաք են սկսել, որպեսզի երաշխավորություն ներկայացվի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ քննարկման ժամանակ ՔՊ-ականները երկու մասի են բաժանվել ու տարբեր կարծիքներ են ունեցել: Նրանց մի մասն ասել է, որ պետք չէ խառնվել գործին, քանի որ այն իրավապահների տիրույթում է, ու եթե միջնորդություն ներկայացնեն, ապա կստացվի՝ միջամտում են իրավական գործընթացին, չեն վստահում, իսկ մյուս մասն էլ հետեւյալ կերպ է բացատրել դրա անհրաժեշտությունը. Անի Գեւորգյանը եւ Լիլի Մկրյանն իրենց խնամքի տակ անչափահաս երեխաներ ունեն, իսկ «Սիներջի» ընկերության տնօրեն Աշոտ Հովհաննիսյանը պատկառելի տարիք ունի, ուստի նրանց դեպքում կալանավորումը խիստ որոշում է: Արդյունքում իշխանականներին հաջողվել է ընդհանուր հայտարարի գալ, ու, ի վերջո, որոշում են կայացրել, որ պետք է երաշխավորություն ներկայացնեն ողջ կազմով: 71-հոգանոց ՔՊ խմբակցությունից 64 պատգամավոր միացել է ստորագրահավաքին. պատգամավորներից մի քանիսը վատառողջ են եղել ու չեն կարողացել գալ ԱԺ, իսկ եւս երկուսը՝ Արսեն Թորոսյանն ու Հռիփսիմե Գրիգորյանն էլ գտնվում են գործուղման մեջ:

Այսօր Երեւանի ավագանիում թեժ իրավիճակ է սպասվում. քննարկվելու է ավագանու հինգ անդամներին մանդատից զրկելու հարցը: Իշխանությունների թիրախում այս անգամ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանն է, «Մայր Հայաստան» խմբակցությունից Ջարուհի Փոստանջյանը, Սոնա Աղեկյանը, Գեւորգ Ստեփանյանը եւ Նարինե Հայրապետյանը, որն իր շուրջ բարձրացած աղմուկից հետո լքել է Հայաստանը: Ընդդիմադիրներին մանդատից զրկելու հիմքը բացակաների թույլատրելի քանակը անցնելն է ու քվեարկություններին չմասնակցելը: Երեւան քաղաքում, ՏԻՄ օրենքի համաձայն, ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից: Ավագանին բաղկացած է 65 անդամից, այսինքն՝ որպեսզի ավագանու անդամները զրկվեն մանդատից, անհրաժեշտ է լինելու 33 ձայն: Երեւանի ավագանու ՔՊ խմբակցությունը եւ նրանց հետ կոալիցիոն հուշագիր կնքած «Հանրապետությունը»-ը միասին ունեն 32 ձայն, իսկ ընդդիմադիր խմբակցությունները՝ 33: Այսինքն՝ ստացվում է՝ եթե իշխանություններին հաջողվի ընդդիմադիրներից մեկ ձայն կորզել, ապա կհասնեն իրենց նպատակին, ու ընդդիմադիր ավագանու հինգ անդամները կզրկվեն մանդատներից: «Մայր Հայաստան» խմբակցությունը հայտարարել է, որ չի մասնակցելու նիստին, «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանը մեզ հետ զրույցում ասաց, որ գնալու են քաղաքապետարան, բայց նիստին քվորում չեն ապահովելու, «Հանրային ձայն» խմբակցությունից նույնպես հայտնեցին, որ չեն մասնակցելու նիստին:

ԶՐՈՒՅՑ

«ՈՒԶՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԽԱՂԱԼ»

ՀՀ իշխանական երեք պատգամավորները՝ Զարուհի Բաթոյանը, Սոնա Ղազարյանը եւ Ծովինար Վադանյանը, պետության հիմնապյուռ համարվող ընտանիքի ձեւակերպումը ձեւախեղել են: «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծով փորձ է արվում կանխել ընտանեկան բռնությունը, սակայն նսեմացվում է ավանդական ընտանիքի դերը՝ ավելացնելով «զուգընկեր» տերմինը:

ArmLur.am-ը զրուցել է «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Աննա Մկրտչյանի հետ, որը նսեմացնող եւ անհասկանալի է համարում նման օրենքի ընդունումը:

-Տիկին Մկրտչյան, վերջերս «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության երեք կին պատգամավորներ ընտանեկան բռնության մասին օրենքում փոփոխություններ անելու նախագիծ են առաջ բերել, որն իրենից ենթադրում է բռնության արգելում, բայց այդ բռնություն բառի ներքո ուզում են «զուգընկեր» տերմինը բերել ընտանիք, կամ կուսության ստուգումն են բռնություն համարում: Ի՞նչ կասեք այս նախագծի մասին, որը մտնելու է օրակարգ:

-Սա առաջին դեպքը չէ, որ ՔՊ-ականները կարողանում են դիտավորությամբ խեղել նույնիսկ ամենադրական օրենքի նախագծերը, որոնք ՀՀ իրավական համակարգի մաս են կազմում: Ես անկեղծորեն համարում եմ, որ ընտանեկան բռնության մասին օրենսդրությունը խիստ անհրաժեշտ էր, եւ նաեւ հպարտությամբ նշում եմ, որ Հանրապետական իշխանության տարիներին ընդունված օրենք է, այսինքն՝ խնդիրներն արձանագրված եւ այդ խնդիրների լուծմանն ուղղված Հանրապետական իշխանության կարեւոր քայլն է: Ի տարբերություն սրանց՝ Հանրապետականը որեւէ բան ծաղրի կամ աբսուրդի մակարդակի չէր վերածում, որովհետեւ նպատակը երեւալը չէր, այլ խնդիրը հստակ էր՝ կարգավորել այն պրոբլեմները, որոնք, այո, կան Հայաստանի Հանրապետությունում: Աղավաղո՞ւմ են. այո՛, աղավաղում են: Ինչո՞ւ են ծաղրում բոլորիս. ես դա չեմ կարող ասել. երեւի բացատրվում է նրանով, որ Հայաստանի թշնամիներն են այդ խմբակը իր ամբողջության մեջ: Մեր պետականության համար ամենածանր պահին, երբ իրենք նույնիսկ իրենց շուրթերով ասում են, որ պետականության լինել-չլինելու խնդիր է դրված, մեզ սկսել են ծաղրել՝ Ազգային ժողովի օրակարգ նման անհասկանալի բաներ բերելով: Նայում ես այս օրակարգը, եւ տպավորություն է, որ մինչեւ հաջորդ՝ ավելի վատ օրակարգը չգա, տպավորություն է, թե ամենավատը սա է, բայց, ոչինչ, հեսա հաջորդը կլինի ու էլ ավելի վատը կլինի: Եթե Դուք ինձ նախորդ քառօրյայի ժամանակ այդ հարցը տայիք, ես կասեի՝ բացի քննիչների դատախազների, դատավորների աշխատավարձերը բարձրացնելուց, ուրիշ ոչ մի օգտակար գործով չենք զբաղվում,, որովհետեւ մեր երկիրը վախի մթնոլորտի, ոստիկանապետության եւ իրավական համակարգի ձեռքը պիտի լինի, որովհետեւ այդպես է միայն Նիկոլն իր աթոռը պահպանելու: Հիմա, սակայն, մեկ այլ աբսուրդի մեջ ենք ընկել...

-Տիկին Մկրտչյան, ի՞նչ եք կարծում, արդյոք այս օրենքով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը փորձո՞ւմ է հաճոյանալ Եվրոպային. նույնասեռականությունը մտցնում են Սահմանադրություն, դարձնում օրենքի մաս, որը մեր կրոնի համար ընդունելի չէ:

-Ինձ համար շատ դժվար է իրենց գլուխների մեջ մտնել, չեմ էլ ցանկանում: Ես մի շատ կարեւոր բան գիտեմ, որ Հայաստանում մարդու եւ քաղաքացու իրավունքները պաշտպանված են ՀՀ Սահմանադրությամբ, այդ կառուցակարգերը շատ հստակ են, իսկ ցանկացած քաղաքացու նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնությունը ՀՀ քրեական օրենսդրությամբ է կարգավորվում եւ այլ ոլորտային օրենսդրությամբ: Նորից եմ կրկնում՝ ինչո՞ւ են նրանք մեզ ծաղրում. գուցե պետականությունը քայքայելուց առաջ ուզում են ամբողջությամբ մեր արժանապատվության, մեր ինքնության հետ խաղալ: Երեւի թե պատճառը սա է:

Զրուցեց ԳՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՎԱԳԱՆԻ

«ՆԻՍՏԸ ՊԵՏՔ Է ՏԱՊԱԼԵԼ»

«Մայր Հայաստան» շարժման առաջնորդ Անդրանիկ Թեւանյանը Երեւանի ավագանու ընդդիմադիր խմբակցություններին կոչ է անում բոյկոտել փետրվարի 7-ին նախատեսված արտահերթ նիստը, որի ժամանակ քննարկվելու է ավագանու 5 ընդդիմադիր անդամների՝ մանդատից զրկելու հարցը:

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» խմբակցությունների ներկայացուցիչները նախագիծ են ներկայացրել, որով առաջարկում են ավագանու նիստերից բացակայությունների հիմքով մանդատից զրկել «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Նարինե Հայրապետյանին, «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ, Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանին, «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանին, «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գեւորգ Ստեփանյանին, «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Զարուհի Փոստանջյանին:

«Ֆեյսբուք»-ի իր էջի ուղիղ եթերում «Մայր Հայաստան» շարժման առաջնորդ Անդրանիկ Թեւանյանն ընդգծեց, որ այդ նիստը պետք է տապալել: «Վաղվա նիստը չպետք է կայանա, այն պետք է բոյկոտել»,- հայտարարեց Թեւանյանը:

Նիստը բոյկոտելու մասին ավելի վաղ հայտարարել էր նաեւ «Հանրային ձայն» կուսակցության նախագահ Վարդան Ղուկասյանը՝ շեշտելով, որ «Հանրային ձայն» խմբակցությունը չի մասնակցելու ավագանու՝ փետրվարի 7-ին կայանալիք նիստին: «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանը, որը հայտարարել է «Հանրային ձայն» կուսակցությունը լքելու մասին, հրաժարվել է մեկնաբանել Վարդան Ղուկասյանի հայտարարությունը՝նշելով, որ հարցազրույց չի տալու: Հաշվի առնելով «Հանրային ձայն» կուսակցության ներսում առկա տարաձայնությունները՝առայժմ պարզ չէ՝կմասնակցեն արդյոք «Հանրային ձայն» խմբակցության անդամներն ավագանու նիստին, թե ոչ: Ավագանու մյուս ընդդիմադիր խմբակցությունը՝ «Ազգային առաջընթաց»-ը, ավելի վաղ հայտարարություն էր տարածել, որով անընդունելի էր համարել ավագանու ընդդիմադիր անդամներին մանդատից զրկելու նախաձեռնությունը եւ դա որակել էր ընդդիմադիրներին լռեցնելուն միտված քայլ:

Եթե «Մայր Հայաստան», «Ազգային առաջընթաց» եւ «Հանրային ձայն» խմբակցությունները չմասնակցեն Երեւանի ավագանու արտահերթ նիստին, նիստը սկսելու համար քվորում չի ապահովվի, եւ այն չի կայանա:

ԳՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ

ԱԱԾ մեկուսարանը արդեն 5 օր է, ինչ մնացել է առանց պետ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ արդարադատության նախարարությունը իրավապահ համակարգի հետ միասին փնտրում է թեկնածու, որը կկարողանա ղեկավարել «Երեւան- Կենտրոն» ՔԿՀ-ն: Քննարկել են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի նախկին պետ Ռուբեն Խալապյանին նշանակել ԱԱԾ մեկուսարանի պետ, բայց դեռ վերջնական որոշում չկա:

Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ ՔՊ-ական պատգամավոր Մելքոնյանի որդին իր ազատման հարցը խիստ ծանր է տարել, սակայն բացատրել են, որ խնդիր կա մեկուսարանում, ու դա պետք է լուծվի, իսկ ինքն անկարող է:

Ի դեպ, Խալապյանը ԱԱԾ մեկուսարանի նախկին պետն էր, որին հեռացրին ու Գագիկ Մելքոնյանի որդուն նշանակեցին նրա փոխարեն:

Եվ, ահա, Խալապյանին կրկին ցանկանում են տանել «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ:

ԿԳՄՄՆ–Ն ԱՅԼԵՎՍ ՉԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության շուրջ ծավալվող աղմուկները հաջորդում են մեկը մյուսին: Դրանք այնքան ջանք ու էներգիա են տանում բազմապրոֆիլ այդ նախարարությունից, որ փոխնախարար չի նշանակում բուհերի գծով:

Պարզվում է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն այլեւս չի համակարգում համալսարանների աշխատանքը եւ ցանկացած հարց՝ կապված բարձրագույն կրթության հետ, չի ընդգրկում իր հետաքրքրությունների շրջանակներում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ համալսարանների աշխատանքն արդեն համակարգում է Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն, որի առաքելությունն է ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության տակ գտնվող Գիտության կոմիտեի եւ ԲՈԿ-ի, ինչպես նաեւ ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության գործառույթները համակարգել:

Շատ բուհերից արդեն ահազանգում են, որ կոմիտեն չի հաջողում համալսարանների հետ աշխատանքում, հստակ չի կարողանում սահմանել բարձրագույն կրթության ոլորտի խնդիրները եւ համակարգված չի աշխատում ԿԳՄՍ նախարարության հետ: Նախկինում բուհերի աշխատանքը համակարգող փոխնախարարը ներկայիս նախարար Ժաննա Անդրեասյանն էր, որը 2022 թվականի դեկտեմբերից չի զբաղեցնում այդ պաշտոնը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վարչությունը, որը համակարգում է բուհերի հետ աշխատանքը, կոմիտեին ֆիզիկապես միացել է 2024 թվականի հունվարին, որի արդյունքում էլ կառավարման լուրջ բացթողումներ կան: Ամեն դեպքում, կապվեցինք Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ Լուսինե Գրիգորյանի հետ, որը տեղեկացրեց, որ խնդիրներ կամ ուշացումներ ոչ մի ժամանակ չեն եղել. «Երբ բուհերը նման հայտարարություններ են անում, ձեւակերպում են՝ որոնք են այն խնդիրները, որոնցով կոմիտեն չի զբաղվում: Մենք գիտենք, որ կան համակարգային խնդիրներ. եթե չլինեին, այդ բարեփոխումներն անելու իմաստ չէր լինի: Բուհ չկա, որ ունենա օրհասական խնդիր, եւ մենք դրանով չզբաղվենք»: Մինչդեռ, շատ բուհերի ղեկավարներ կան, որ մեզ ահազանգել են, դեռ՝ծպտյալ, որ խնդրի դեպքում օրերով չեն կարողանում պատասխանատու կառավարիչ գտնել, կարգավորել հարցը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ

Ռոբերտ Քոչարյանի կրտսեր որդի, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լեւոն Քոչարյանը չի բացառում, որ ընդդիմությունը կրկին փողոցային պայքար կսկսի իշխանություններին հեռացնելու համար:

Նկատենք՝ դեռ օրեր առաջ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր, դաշնակցական Իշխան Սաղաթելյանը հայտարարել էր, որ ընդդիմության բարձրախոսը ազատ է, եւ հրավիրել էր այն վերցնողների ուշադրությունը: Հարցին՝ ընդդիմությունը համակրեպվել է արդյոք, որ իր ուժերից վեր է իշխանությանը հեռացնելը, Քոչարյանը ինքն էլ չի հասկացել, թե ընդդիմությունն ով է:

«Ես, ընդդիմություն ասելով, չգիտեմ՝ ինչ նկատի ունեք: Եթե կոնկրետ իմ մասով, ես չեմ համակերպվել ու չեմ էլ համակերպվել: Պայքարելու եմ այդ ամեն ինչի դեմ»,- այս մասին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասաց նա:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ ՉԷ

Երեկ՝ լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ, Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, պատասխանելով այն հարցին, թե հայելային եղանակով ինչը պետք է փոխվի նաեւ Ադրբեջանի Սահմանադրությունում, պատասխանեց, որ այնտեղ օրենսդրությունում կան տարբեր դրույթներ, որի մասին խոսել են ԱԳ նախարարը, նաեւ ԱԺ նախագահը:

Կոնջորյանը, սակայն, խնդրեց քննարկման դիսկուրսի տրամաբանությունը չտանել այն ուղղությամբ, թե Հայաստանի Սամանադրությունը փոխելը Ադրբեջանի պահանջն է:

«Բացարձակապես Ադրբեջանի պահանջը չէ. սա ՀՀ ներքին օրակարգն է, սա Հայաստանի պետության մասին է, ՀՀ քաղաքացու մասին է, ժողովրդի մասին է, եւ այս քննարկումն ինքնին շատ կարեւոր է: Կարծում եմ, որ մենք բոլորս էապես կշահենք, եթե կարողանանք այս քննարկման ընթացքում այդ քարոզչական պրոպագանդիստական աղմուկը մի կողմ տանել եւ բովանդակային քննարկել, որովհետեւ սա մեր մասին է»,- ընդգծեց Կոնջորյանը:

Ըստ նրա՝ եւ՛ Սահմանադրության, եւ՛ Անկախության հռչակագրի, եւ՛ 4-րդ հանրապետության վերաբերյալ քննարկումները, որոնք ակտիվ այս օրերին ընթանում են, Հայաստանի մասին են. «Մեր ինքնահայեցման մասին են, թե ինչպես ենք այսօրվա փլուզվող աշխարհակարգի պայմաններում մենք պատրաստվում այն մարտահրավերներին, որոնք մեր առջեւ կան: Այս հարցի ելակետային հիմքը որեւէ կապ չունի»:

ԱՐՁԱԳԱՆՔ

«ԴԺՎԱՐ Է ԼԻՆԵԼ ՄԵԿԸ ԲՈԼՈՐԻՑ»

Ազգային ժողովի փոխխոսնակ Հակոբ Արշակյանն արձագանքել է Հանրային ռադիոյի գործադիր տնօրենի հայտարարությանը՝ կապված վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ օրեր առաջ լրատվամիջոցին տված հարցազրույցի հետ:

«Նախ, պետք է արձանագրել, որ Հանրային ռադիոյի տան տերը հանրությունն է, ռադիոյի տնօրենը ընդամենը ռադիոյի տնօրենն է: Պետք է արձանագրել նաեւ, որ իսկապես ասվել է, որ պետք է դադարել, սակայն դադարել լինել գործիք, դադարել լինել անուրջներով ապրող:

Ասվել է, որ ուժեղը ուժեղացնում է իր պետությունը, այն, ինչն ունի, ոչ թե նպատակադրվում է ունենալ մի բան, որն իրենը չէ, օրինական չէ. իհարկե, հեռավոր անուրջներում շատ կապված է իր հետ, որովհետեւ այնտեղ ապրել են իր նախնիները, անցյալում իրենն է եղել, սակայն այսօրվա իրողությամբ նա ունի մի բան, որն իր խնամքի ու հոգատարության կարիքն ունի այսօր եւ հիմա, իրականում, ոչ թե անուրջներում:

Այո՛, եկե՛ք ուժեղանանք, եկե՛ք դադարենք մեր ունեցածը, աշխարհի կողմից մերը ճանաչվածն աղտոտել, երբ մեր ուշադրության կարիքն ունի՝ անտեսել, երբ մեծարման կարիք ունի՝ թերագնահատել, երբ ջերմության կարիք ունի՝ լքել, երբ մեր ծառայության կարիքն ունի՝ խուսանավել, ճողոպրել, ծուլանալ, երբ մեր բազկի ուժի կարիքն ունի՝ դավաճանել: Եկե՛ք սիրենք մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը, որովհետեւ գոյություն ունի Աստվածաշնչյան ճշմարտություն. «Որովհետեւ ով ունի, նրան կտրվի ու կավելացվի, իսկ ով չունի, ունեցածն էլ նրանից կվերցվի»:

Խաղ է ժամանակ շահելո՞ւ... գոնե «շահած» տասնյակ տարիների պատմությունը պիտի հուշի, որ ժամանակ շահելու հայկական «շուստրիությունը» չի աշխատում: Ընդ որում՝ ժամանակ շահելու հայկական «շուստրիությանը» հավատացել են միայն Հայաստանի «շուստրի» իշխանությունները, ովքեր ժողովրդին հենց այդ տրամաբանության մեջ. «Ժողովո՛ւրդ ջան, դիմացե՛ք. պիտի աղքատ ապրեք, զրկանքներ կրեք, որովհետեւ մենք ժամանակ ենք շահում եւ ուժեղանում ենք, բանակ ենք կառուցում»: Իսկ իրականում մխում էին առանց այդ էլ ջլատված երկրի հարստությունը:

Հավանաբար շատերը երջանիկ կլինեին, եթե այս թմբիրը շարունակվեր, սակայն խորը քնից արթնացողի դժկամությամբ արձանագրում են, որ իրենց այլեւս ոչ ոք չի պատրաստվում քնեցնել՝ սնել անուրջներով, կերակրել պատմական արդարությամբ, կուրացնել ատելության սերմանմամբ:

Հանրային ռադիոյի տնօրենը սովորական երկրների շարքին է դասում Արեւելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրները, իսկ Հայաստանը՝ անսովորների՝ հատուկների՝ հիմնավորելով, թե հայերին սպառնում է ցեղասպանություն՝ նոր ցեղասպանություն:

Վերջին հարյուրամյակում Արեւելյան կամ Կենտրոնական Եվրոպայում տասնյակ երկրներ են առաջացել ու անհետացել քարտեզից, ցեղասպանություն, քիմիական զենքի կիրառումներ, նացիզմ, կոմունիզմ, փառահեղ հաղթանակներ ու նվաստացուցիչ պարտություններ, ավերակներ ու կոտորած, տասնյակ միլիոնավոր զոհեր:

Հասկանում եմ, որ դժվար է լինել մեկը բոլորից, իր առանձնահատկություններով ու տարբերություններով, սակայն մեկը բոլորից՝ պատասխանատու իր համար, եւ, միաժամանակ, պատմության ընթացքի համար, մեկը բոլորից՝ բոլորի պես երջանիկ, բոլորի պես դժբախտ, բոլորի պես առանձնահատուկ, բոլորի պես յուրահատուկ, բոլորի պես ուժեղ, բոլորի պես ազատ, բոլորի պես պատերազմի դաշտում զինվոր, իսկ տնօրենի սենյակում՝ տնօրեն, եկեղեցում՝ սպասավոր, իսկ Ազգային ժողովում՝ քաղաքական գործիչ, մեկը բոլորից՝ պատասխանատու իր համար, պատասխանատու բոլորի համար: Իրողությունն այն է, որ մենք մեկն ենք բոլորից՝ լեզվական ու մշակութային առանձնահատկություններով, ավանդույթներով, հոգեւոր ու նյութական ժառանգությամբ, առավելություններով ու թերություններով, ամբողջի մաս ենք եւ մեզանով լրացնում ենք ամբողջը»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

FreeNews-Ի ՕՐԵՐԸ ՀԱՇՎԱԾ ԵՆ

ArmLur.am-ի թղթակիցը ֆիքսել է, որ նախօրեին ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը եւ ՀՌՀ-ի նախագահ Տիգրան Հակոբյանը հանդիպել են: Ըստ մեր տեղեկությունների՝ հանդիպման ժամանակ Քոչարյանը Հակոբյանին փոխանցել է, որ իշխանական «դաբրոն» կա, ու պետք է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կնոջ ղեկավարած FreeNews TV-ն եթերազրկել: Հակոբյանին այդ «հուշումը» ոգեւորել է ու, հատկապես, ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանի կայացրած որոշումը, որով FreeNews հեռուստաընկերությունը 24 ժամով եթերազրկվել է:

Անդրանիկ Քոչարյանի ենթադրությամբ՝ FreeNews TV-ի օրերը հաշված են: Մեր աղբյուրների փոխանցմամբ նույնպես Սիմոնյանի կնոջ ղեկավարած հեռուստաընկերության օրերը հաշված են, քանի որ հենց թիմի ներսում էլ գրեթե բոլորը կողմ են, որ փակվի հեռուստաընկերությունը, քանի որ այն, միայն Ալեն Սիմոնյանի եւ նրա նեղ շրջապատի գովքն անելուց բացի, ոչ մի օգուտ չի տվել իշխանությանը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել է, որ ԱԺ նախագահի ընտանիքը, օգտվելով պետության, կառավարության բարեհաճությունից, ամիսներ շարունակ չի վճարել Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոհաղորդիչ ցանցին ամսական 1.5 մլն դրամ վճարը: FreeNews ընկերության պարտքը կազմել է 23,3 մլն ՀՀ դրամ, որից ընկերությունը մարել է 1,5 մլն ՀՀ դրամը, պարտքի մնացորդն այս պահին կազմում է 21,8 մլն ՀՀ դրամ:

Նշենք նաեւ, որ այս հեռուստաալիքը բացվել է Ալեն Սիմոնյանի որդու կնքահոր՝ Էդգար Ավագյանի կողմից, որը երկար տարիներ աշխատել է հայաստանյան տարբեր հեռուստաընկերություններում, հիմնականում՝ մենեջեր, այսօր էլ աշխատում է Ալեն Սիմոնյանի կնոջ ղեկավարած FreeNews ՀԸ-ում:

«ՁԵԶ ՕՊՏԻՄԱԼԱՑՐԵ՛Ք...»

ՀՀ Ազգային ժողովի անկուսակցական պատգամավոր, Մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Վարդենիսն ու Ճամբարակն է՞լ դժգույն ու դժբախտ են.

ինձ ահազանգել են բազմաթիվ վարդենիսցիներ ու ճամբարակցիներ եւ խնդրում են իրենց զայրույթը փոխանցել առ այն, որ Վարդենիսի եւ Ճամբարակի անձնագրագին ծառայությունները փակում են մայրաքաղաք Երեւանից ստացված հրահանգով:

Խոշորացնելու, կրճատումների, բարեփոխումների, օպտիմալացման անվան տակ հեռավոր քաղաքներից ու գյուղերից ամեն կառույց հանում են:

Նպատակը ենթադրելի է, բայց փաստն այն է, որ սահմանամերձ բնակավայրերը այսպիսով դատարկվում են պետության «բարձր հովանու ներքո»: Իսկ 2021-ին պայծառ ապագա էիք խոստանում մեր ժողովրդին: Խաբեբանե՛ր...

Այս իրավիճակում մնում է մի սպասելի հարցադրում. Վարդենիսն ու Ճամբարակն է՞լ են դժգույն ու դժբախտ:

Ձեզ օպտիմալացրե՛ք կառավարման համակարգից...Ձե՛զ...

Հ. Գ. Ամենազգային ծառայությունների փակման հարցով դիմել եմ ՆԳ նախարարին, պատասխանը կհրապարակեմ: Քաղաքացիների ձայնը պիտի լսելի լինի հասցեատերերին, ու ես սիրով իրականացնում եմ ԱԺ պատգամավորի իմ գործառույթները»:

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՌԵՎԱՆԳՈՒՄ

ԾԵԾ՝ ՍԱՌՈՒՅՑՈՎ ԼՑՎԱԾ ՇՇԵՐՈՎ

Պարզվել են Տավուշի մարզի չորս բնակիչների կողմից Երեւան քաղաքի 36-ամյա բնակչի առեւանգման, վերջինիս նկատմամբ ինքնիրավչություն կատարելու դեպքի հանգամանքները:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրությունից, հիմնավորվել է, որ Տավուշի մարզի 49-ամյա բնակիչ Մ.Մ.-ն, մի խումբ անձանց՝ եղբոր, նույն մարզի 53-ամյա բնակիչ Ա.Մ.-ի, վերջինիս որդու՝27-ամյա Յ.Մ.-ի եւ Ա.Մ.-ի ընկերոջ՝ Տ.Հ.-ի հետ, նախնական համաձայնությամբ, առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով, առեւանգել են 36-ամյա իր ծանոթ, Երեւան քաղաքի բնակիչ Ա.Հ.-ին եւ վերջինիս կամքին հակառակ, ապօրինի տեղափոխելով այլ վայր, բռնություն գործադրելու սպառնալիքով վերջինիս նկատմամբ կատարել են ինքնիրավչություն, որն էական վնաս է պատճառել տուժողի իրավունքներին եւ օրինական շահերին:

Մասնավորապես, պարզվել է, որ դեռեւս 2020թ. մայիսին Մ.Մ.-ն Երեւան քաղաքի հիշյալ բնակչին տվել է շուրջ 230.000 ՀՀ դրամ արժողության տարբեր ապրանքներ՝ դրանք վաճառելու եւ գումարը հետագայում վճարելու պայմանով: Սակայն, վերջինս, վերցված ապրանքները վաճառված չլինելու պատճառաբանությամբ, նշված գումարը չի տվել, ինչն էլ ծանոթների միջեւ դարձել է տարաձայնությունների պատճառ:

Այդ ընթացքում Մ.Մ.-ն պարբերաբար զանգահարել է եւ պահանջել է ինչպես պարտքը, այնպես էլ դրան իր կողմից հավելագրված տոկոսագումարը՝ չվճարելու դեպքում սպառնալով վերցնել պարտապանին պատկանող «Լադա Պրիորա» մակնիշի ավտոմեքենան: Վերջինս պահանջված ժամանակահատվածում չի վճարել պարտքը, որից հետո պարտատերը՝ Մ.Մ-ն, ընկերոջ, եղբոր, վերջինիս որդու հետ պայմանավորվել է բռնություն գործադրելով առեւանգել Ա.Հ.-ին:

Տեղեկանալով, որ վերջինս գտնվում է Տավուշի մարզում՝ Մ.Մ.-ն 2020 թ. օգոստոսի 20-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, իր ավտոմեքենայով հիշյալ անձանց հետ գնացել է Ա.Հ.-ի մոտ եւ պահանջել իր գումարը, այնուհետեւ ցանկացել է վերջինիս ավտոմե-քե-նայից վերցնել վաճառքի ենթակա բջջային հեռախոսների աքսեսուարները, սա-կայն Ա.Հ.-ն թույլ չի տվել: Այնուհետեւ խմբի անդամները, փակելով Ա.Հ.-ի ավտոմեքենայի ճանապարհը եւ հեռանալու բոլոր ուղիները, բացահայտ, Ա.Հ.-ի կամքին հակառակ, ֆիզիկական բռնություն գործադրելով, առեւանգելու նպատակով, հրելով տուժողին, նստեցրել են իրենց ավտոմեքենաներից մեկը, տարել Պտղավան գյու-ղի ճանապարհին գտնվող գազալցակայան:

Ա.Հ.-ին տեղափոխելով հիշյալ գազալցակայանում գտնվող սենյակ՝մի քանի հոգով ձեռքերով ու ոտքերով, սառույցով լցված պլաստմասե շշով հարվածներ են հասցրել Ա.Հ.-ի մարմնի տարբեր հատվածներին՝ շարունակելով այդ գործողությունները նաեւ վերջինիս վայր ընկնելուց հետո:

Ապա Ա.Հ.-ից պահանջել են տալ իրեն պատ-կա-նող «Լադա Պրիորա» մակնիշի ավտոմեքենայի բանալիները, սակայն վերջինս հրաժարվել է, ինչի պատճառով հանցավոր խմբի անդամները կրկին հարվածներ են հասցրել նրա մարմնի տարբեր մասերին:

Շարունակելով իրենց հանցավոր գործողությունները՝հանցավոր խմբի անդամները, սպառնալիքների ազդեցության տակ փոխ-լրացնելով միմյանց գործողությունները, Ա.Հ.-ի կողմից պարտք մնացած 230.000 ՀՀ դրամ գումարը օրենսդրորեն սահմանված կարգով ստանալու փոխարեն, իրենց ենթադրյալ իրավունքներն ինքնակամ իրականացնելով, տվյալ պահին փաստացի ազատությունից զրկված Ա.Հ.-ի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով վերջինիս դրամապանակից վերցրել են այնտեղ առկա 16.000 ՀՀ դրամը եւ պահանջել իրենց հանձնել ավտոմեքենայում գտնվող բջջային հեռախոսների աքսեսուարները:

Տուժողը, գիտակցելով առեւանգման հետեւանքով անազատության մեջ գտնվելու հանգամանքը եւ կրկին ֆիզիկական բռնության ենթարկվելու իրական վտանգը, հարկադրված կատարելով հանցավոր խմբի կողմից ներկայացված ապօրինի պահանջը, իր ավտոմեքենայից դատարկել է առնվազն 634.800 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսների տարբեր աքսեսուարները՝ դրանք հանձնելով Մ.Մ.-ին, որից հետո նրան թույլատրել են հեռանալ նշված վայրից:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ վերոհիշյալ չորս անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով մարդուն առեւանգելը) եւ 322-րդ հոդվածի 2-րդ մասով (բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով ինքնիրավչություն կատարելը):

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝նշված 4 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐՈՒՅԹ

ԶԻՆԱՄԹԵՐՔ՝ ՆԿՈՒՂՈՒՄ

ՆԳՆ ոստիկանության Արարատի բաժանմունքի քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Արարատ քաղաքի Խանջյան փողոցի տեսքերից մեկի 43-ամյա բնակիչը նկուղում ապօրինի շինություն է կատարել:

Նրանք փետրվարի 5-ի կեսօրին ստուգման նպատակով այցելել են նշված հասցե, որտեղ նկուղի տեսանելի մասում նկատել են զինամթերքով արկղեր:

Վեդիի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Արարատի բաժանմունքի ծառայողներն ու քննիչները զննությամբ նկուղում հայտնաբերել են 37 տրոտիլ, էլեկտրոդետոնատորներ, տարբեր տեսակի 56 փամփուշտ, 20 պայթուցիչ եւ այլն:

43-ամյա տղամարդը ձերբակալվել եւ ներկայացվել է Վեդիի քննչական բաժին, ապա տեղափոխվել է ոստիկանության Արարատի բաժնի ձերբակալվածների պահման վայր:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Վեդիի քննչական բաժին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

7 ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԸ՝ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն հարցաքննության է հրավիրել ու հարցաքննել է «Սիներջի» ընկերության հիմնադիր Աշոտ Հովհաննիսյանի որդուն, որը Լուսինե Թովմասյանի ամուսինն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝նախաքննական մարմինը հարցաքննության կոչվիրի նաեւ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին, քանի որ նախաքննական մարմնում քննարկվել է հարց, որ նախարարի հաստատումով են կատարվել գնումների գործընթացները:

Հիշեցնենք՝ ArmLur.am-ը հայտնեց, որ Քննչական կոմիտեն էկոնոմիկայի նախարարության չարաշահումների քրեական գործով 7 անձի մեղադրանք է առաջադրել, որոնց մեջ էին նաեւ պաշտոնից ազատված փոխնախարար Անի Իսպիրյանը եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝Անի Գեւորգյանը: Քրեական գործով անցնող 7 մեղադրյալները կալանավորված են:

Նշենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ձեռնարկված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթի շրջանակներում կատարված քննչական եւ գաղտնի քննչական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձինք նախնական համաձայնությամբ, մի խումբ անձանց դրդմամբ եւ օժանդակությամբ չարաշահել են ծառայողական լիազորությունները:

Այս խմորը դեռ երկար ջուր կտանի:

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔ

ՆԳՆ ոստիկանության Վաղարշապատի բաժնի եւ ՊՊԳՎ Վաղարշապատի պահպանության բաժնի ծառայողները համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում փետրվարի 2-ին՝ էջմիածին քաղաքում իրականացրած ուժեղացված ծառայության ընթացքում, իրացնելով ստացված տվյալները, Մաշտոցի փողոցի շենքերից մեկի բակում հայտնաբերել, ապօրինի զենք պահելու կասկածանքով ձերբակալել եւ Վաղարշապատի բաժին են տեղափոխվել Մրգաստան գյուղի բնակիչ 16-ամյա մի պատանու:

Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից:

Խուզարկությամբ նրա պայուսակում հայտնաբերվել է գազային ատրճանակ՝ առանց համապատասխան թույլտվության:

Պատանին հայտնել է, որ ատրճանակը պատկանում է 19-ամյա ընկերոջը: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Վաղարշապատի քննչական բաժին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 5-ից 6-ը ՀՀՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 54 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

Բերդի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Արամ Միրզոյանը Հադրութի շրջանի Ակնաղբյուր գյուղից Տիգրանի եւ Մարիամի պսակադրությունը մի քանի օր առաջ կատարել է Բերդ համայնքի Չինարի գյուղի անտառում գտնվող Սուրբ Խորանաշատի վանքում: Ի դեպ, Տեր Արամը ծննդով սահմանամերձ Չինարի գյուղից է: 2022թ.-ին Հայաստանում մեծ շուքով նշվեց Խորանաշատի 800-ամյակը: Վանքը սահմանի եզրին է, սակայն հավատացյալները հայ սահմանապահների կողմից անվտանգության միջոցառումներ ձեռնարկելու պարագայում այցելում են հին, հայտնի վանք. Խորանաշատը հնում եղել է գրչության կենտրոն: Խորանաշատի վիճակը վատթար է, այն վերանորոգման խիստ կարիք ունի: 1946 թ.-ին չինարեցիները սեփական ուժերով մասնակի վերանորոգում են կատարել Խորանաշատում, սակայն այժմ նորոգման խիստ կարիք կա: Մատենադարանում պահվում են Խորանաշատում ստեղծված շուրջ մեկ տասնյակ բացառիկ ձեռագրեր՝ստեղծված 13-րդ դարից սկսած, այդ թվում՝ 1224 թ.-ի հանրահայտ Խորանաշատի Ավետարանը:

ԱՅԾԵՐԸ ՊԱՅԹԵԼ ԵՆ

Փետրվարի 4-ին Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղում՝ սահմանամերձ գոտում՝ 7-րդ դարի Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարեւանությամբ, Ոսկեպարի մի բնակչին պատկանող երկու այծ պայթել են հակահետեւակային ականների վրա, որի հետեւանքով այծերը ոտքերից վիրավորվել են: Վնասված կենդանիները ականապատ դաշտից դուրս են բերվել Նոյեմբերյանի սահմանապահ զորամասի զինծառայողների օգնությամբ: Ոսկեպարցի այծատերը ստիպված է եղել վիրավոր այծերը մորթել, քանի որ ոտքերից վիրավոր կենդանիները ապրելու շանսեր չունեին: Նախկինում համարյա ամեն տարի Ոսկեպարի սահմանագոտում խոշոր եղջերավոր անասունները, հայտնվելով ականապատ դաշտում, վիրավորվում էին, վիրավոր կովերին մեծ դժվարությամբ ականապատ տարածքից հանելուց հետո անասնատերերը կենդանիներին հարկադիր մորթի էին ենթարկում: Ոսկեպարի բնակիչները, տնամերձ հողատարածքներից բացի, հողագործությամբ չեն զբաղվում, խոշոր եւ մանր եղջերավոր անասուններ են պահում, անասուններն արածում են գյուղի տարածքի ընդարձակ արոտավայրերում: Կենդանիները առանց հսկողության մնալու դեպքում, թարմ արոտի հետեւից գնալով, հայտնվում են բնակավայրի սահմանամերձ, ականապատ տարածքներում: Ոսկեպար գյուղի հարակից գոտում գտնվող՝Վերին Ոսկեպարի՝ Յուխարի Ասքիպարայի՝ նախկինում ադրբեջանաբնակ գյուղի տարածքը՝ անկլավը Ադրբեջանին հանձնելու դեպքում Ոսկեպար գյուղի արոտավայրերը խիստ կրճատվելու են, Ոսկեպարի բնակիչների՝ անասնապահությամբ զբաղվելու հնարավորությունները շատ փոքրանալու են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻՆ

Պարենային անվտանգության ապահովումը պետական քաղաքականության գերակա ուղղությունն է, քանի որ ընդգրկում է ազգային, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական եւ բնապահպանական գործոնների լայն շրջանակ: Այս մասին փետրվարի 6-ին ԱԺ-ում հայտարարությունների ժամին իր ելույթում ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհեր Մելքոնյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Պետության պարենային անվտանգության աստիճանը կախված է գյուղատնտեսական արտադրության բազային ներուժից: Պարենային անվտանգության ապահովման բնագավառում ագրարային քաղաքականությունը պետք է ուղղված լինի հայրենական գյուղատնտեսական արտադրողին օգնություն ցուցաբերելուն՝ պետական հովանավորչության ռազմավարության օգտագործմամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պարենային անվտանգությունն ապահովելու համար նրանց սպառած սննդի գերակշիռ մասը պետք է արտադրվի սեփական գյուղատնտեսության ոլորտում: Իրերի իրական վիճակն այսօր վկայում է մեր երկրում պարենային անվտանգության լուրջ խնդիրների մասին: Դա պայմանավորված է ազգային տնտեսության բոլոր ոլորտներում առկա համակարգային ճգնաժամով եւ անկմամբ:

Անցած շաբաթ գործընկերներիս հետ Շիրակի մարզում էինք: Ֆերմերային եւ գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում վերջիններս իրենց մտահոգությունը հայտնեցին՝դիզվառելիքի եւ պարարտանյութի բարձր գների, առաջիկա ոռոգման սեզոնին ժամանակին ջուր ունենալու, հացահատիկի եւ կարտոֆիլի մթերման ցածր գների հետ կապված:

2022 թվականի բերքահավաքի ժամանակ հացահատիկի գինը 165-175 դրամ էր մեկ կիլոգրամի համար:

2023 թվականի բերքահավաքի ժամանակ հացահատիկի կիլոգրամն արդեն արժեր 70-80 դրամ:

2021 թվականին Հայաստանը սպառել է 367 հազար տոննա ցորեն, որից միայն 97 հազար տոննան է աճեցվել տեղում: Մնացածը ներմուծվել է, հիմնականում՝ Ռուսաստանի Դաշնությունից:

Նույն տխուր վիճակագրությունը շարունակվել է անցած տարիների ընթացքում:

Ցորենի եւ մի շարք այլ մշակաբույսերի ինքնաբավության մակարդակը մեր հանրապետությունում շարունակում է ցածր մնալ:

Պետական լուրջ աջակցության բացակայության, մթերման ցածր գների պատճառով շատերը մեծ վնասներ են կրել, եւ լիովին տրամաբանական է, որ Շիրակի մարզում կրճատվում են ցորենի ցանքատարածությունները:

Գյուղացիներին թողնելով մեն մենակ բազմաթիվ խնդիրների ու հոգսերի հետ՝ տպավորություն է ստեղծվում, որ իշխանությունները կարծես միտումնավոր ամեն ինչ անում են, որպեսզի արժեզրկեն հայկական արտադրանքը, ոչնչացնեն ազգային գյուղատնտեսությունը:

Ոլորտի խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ամրապնդել եւ զարգացնել գյուղոլորտում արտադրողների ներուժը, ինչը կնպաստի պարենային անվտանգության համակարգերի ստեղծմանը:

Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին ընդառաջ՝ կոչ եմ անում համապատասխան գերատեսչություններին անհապաղ միջոցներ ձեռնարկել բարձրացրած խնդիրները լուծելու համար:

Գյուղացին ամեն որպե պետք է զգա պետության աջակցությունը:

Մեր երկրի պարենային անվտանգությունն անմիջապես փոխկապակցված է ֆերմերային եւ գյուղացիական տնտեսությունների բարեկեցության հետ»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀՈՒՇԱԳԻՐ

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Երեկ հիմք է դրվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, «Օլիմպիոնիկ» մարզական բարեգործական հիմնադրամի եւ Fastex-ի միջեւ գործակցությանը:

Դրա նպատակը Հայաստանի Հանրապետությունում սպորտի զարգացման, մարզիկների մրցունակության բարձրացման, վերջիններիս կենսական պայմանների բարելավման, ինչպես նաեւ ներպետական սպորտի ոլորտում գրանցվող հաղթանակների խթանումն ապահովելն է:

Համաձայն պայմանավորվածության՝ Fastex-ը կտրամադրի մինչեւ 5 միլիոն FTN (Fasttoken), որպեսզի աջակցություն ցուցաբերվի օլիմպիական, պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձեւերի, ինչպես նաեւ օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու եւ շախմատ մարզաձեւերի միջազգային մրցաշարերում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին եւ նրանց մարզիչներին: Ընդհանուր շրջանառությունից թվային գործարքների ռեեստրում (բլոկչեյնում) առանձնացվել եւ մինչեւ 2030 թվականն ապահով սառեցվել են 5 միլիոն $FTN-ները: Վերջիններս աստիճանաբար կբաշխվեն՝համաձայն սմարթ պայմանագրերի միջոցով նախապես սահմանված պայմանների:

Այս մոտեցումը խրախուսում է միջոցների արդար եւ թափանցիկ տեղաբաշխումը շահառուների թվային դրամապանակներին:

«Հայաստանի կառավարությունն այսօր հսկայական ուշադրություն է դարձնում սպորտին, բայց ինչպես ամբողջ աշխարհում, սպորտը լրացուցիչ հոգածության կարիք ունի: Ամբողջ աշխարհում ընդունված է ներգրավել հովանավորներ, որոնք կլուծեն հարցեր, որոնք չեն մտնում պետության հոգածության տակ եղած հարցերի շրջանակում: Մենք «Ֆասթեքս»-ի հետ նախնական պայմանավորվածություն արդեն ունենք: Շատ գործնական փուլում է մեր քննարկումը: Շատ մոտ ապագայում կկնքենք հուշագիր, դրանից հետո կստորագրվի եռակողմ պայմանագիր ԿԳՄՍՆ-ի, «Ֆասթեքս»-ի եւ «Օլիմպիոնիկ» հիմնադրամի միջեւ: Դրանից հետո կունենանք հնարավորություն շատ արագ եւ կոնկրետ լուծում տալ բազմաթիվ խնդիրներին»,- նշել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

«Մենք գիտակցում ենք ներպետական սպորտի զարգացման անհրաժեշտությունը եւ մարզիկների հաղթանակները խրախուսելու միջոցով ուզում ենք էլ ավելի ընդգծել նրանց ձեռքբերումների եւ մրցանակների կարեւորությունը Հայաստանի Հանրապետության սպորտի զարգացման եւ պատմության համար», - նշել է Fastex-ի համահիմնադիր Վիգեն Բաղալյանը:

«Fastex-ը, կարեւորելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործառույթը, նախաձեռնել է գործընթաց՝ Հայաստանի սպորտի զարգացմանն ուղղված՝ մասնավորապես համաֆինանսավորելով մի շարք ծրագրեր եւ նախագծեր: Ներկա փուլում մենք ավարտին ենք մոտեցնում բանակցությունների եւ համապատասխան փաստաթղթերի մշակումը: Գործակցությունը կրելու է երկարաժամկետ եւ ռազմավարական բնույթ, որի շրջանակներում Fastex-ը ֆինանսավորելու է սպորտի տարբեր ուղղություններ՝ խրախուսելով ինչպես գործող մարզիկներին, այնպես էլ նոր սերնդի պատրաստումը», - ասել է Fastex-ի գործադիր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը:

Հավելենք, որ ԿԳՄՍ նախարարությունը եւ «Օլիմպիոնիկ» մարզական բարեգործական հիմնադրամը պարտավորվել են գործադրել բոլոր ջանքերը հուշագրով սահմանված նպատակներն իրագործելու համար:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 1 մարդ զոհվել է, 7-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ՝ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունն անդրադարձել է շրջանառվող խոսակցություններին՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս եւ Ճամբարակ համայնքների անձնագրային ծառայությունները փակելու վերաբերյալ:

Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունից պարզաբանել են, որ միգրացիայի ոլորտում նախաձեռնվել են խորքային բարեփոխումներ:

Նշվում է, որ բարեփոխումների համատեքստում նպատակ է դրվել տարածքային անձնագրային ծառայությունները վերածել տարածքային ստորաբաժանումների, որտեղ կմատուցվեն ոչ միայն անձնագրային, այլեւ այլ ծառայություններ՝ կացության կարգավիճակների դիմումների ընդունում, ապաստանի հայցերի ընդունում, ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների ընդունում եւ այլն:

«Այս մոտեցումը հնարավորություն կտա քաղաքացիներին եւ օտարերկրացիներին ծառայություններից ավելի ճկուն տարբերակով օգտվելու եւ վերացնելու նշված դիմումները ներկայացնելու համար պարտադիր Երեւանի գլխամասային գրասենյակ մոտենալու անհրաժեշտությունը: Հարկ է նաեւ ընդգծել, որ անձնագրային ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն յուրաքանչյուր քաղաքացու պարագայում առաջանում է մի քանի տարին մեկ անգամ. անձնագիրն, օրինակ, ստանդարտ ընթացակարգով տրամադրվում է 10 տարի ժամկետով: Օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության նշումը /ելքի կնիք/ չեղարկվել է ս.թ. հունվարի 1-ից, ինչով եւս վերացել է տարին մեկ անգամ անձնագրային ծառայություն այցելելու անհրաժեշտությունը»,- ասված է պարզաբանման մեջ:

Կենսաչափական անձնագրերի եւ նույնականացման քարտերի նոր համակարգի ներդրման պետությունմասնավոր համագործակցության ձեւաչափով իրականացվող ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր մարզում հիմնել մեկ անձնագրային ստորաբաժանում, որի շրջանակում նախաձեռնվել է ստորաբաժանումների օպտիմալացում՝ թիվը 63-ից հասցնելով 47-ի:

Այս համատեքստում նախատեսվում է Գեղարքունիքի մարզի բոլոր անձնագրային ծառայությունները միացնել Մարտունի համայնքի անձնագրային ծառայությանը: Փոփոխությունների արդյունքում ծառայության անվանումը կլինի Միգրացիայի եւ քաղաքացիական ծառայության Մարտունու բաժին:

Վարդենիսի եւ Ճամբարակի անձնագրային ծառայությունները փակելու մասին ահազանգել է Հայաստանի ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը՝նշելով, որ այդ հարցով դիմել է ՀՀ ներքին գործերի նախարարին, որի պատասխանը կհրապարակի:

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ««Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով մասնագիտական գործունեությունը դադարեցված բարձրագույն կրթություն չունեցող մանկավարժների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, 2021 թվականին «Հանրակրթության մասին» օրենքում կատարված փոփոխությունների անցումային դրույթներով սահմանվել է՝ այն ուսուցիչները, որոնք չունեն բարձրագույն կրթություն, կարող են շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը մինչեւ 2018 թվականի օգոստոսի 20-ը: Այնուհետեւ սահմանված վերջնաժամկետը երկարաձգվել է մինչեւ 2023 թվականի օգոստոսի 20-ը: Չնայած բազմաթիվ ուսուցիչներ ապահովել են օրենքի պահանջի կատարումը, այդուհանդերձ, բարձրագույն կրթություն չունեցող ավելի քան 1300 ուսուցիչներ նշված ժամկետում պետք է դադարեցնեին մանկավարժական աշխատանքը:

2023 թվականին «Հանրակրթության մասին» օրենքում նախաձեռնվել են փոփոխություններ, որոնց համաձայն՝ եթե բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները մասնակցեն կամավոր ատեստավորմանը եւ հաղթահարեն ատեստավորված համարվելու շեմը, կարող են շարունակել ուսուցչական աշխատանքը: Հակառակ պարագայում նրանք դադարեցնում են իրենց մանկավարժական գործունեությունը:

Ատեստավորմանը մասնակցել է բարձրագույն կրթություն չունեցող 894 ուսուցիչ, որից 354-ը կամավոր ատեստավորման արդյունքներով համարվել է ատեստավորված եւ շարունակում է մանկավարժական գործունեությունը: Նրանք նաեւ ստանում են վարձատրություն բարձրացված դրույքաչափով ու հավելավճարով՝ համաձայն ատեստավորման արդյունքների:

Այդուհանդերձ, մի քանի հարյուր ուսուցիչներ, օրենքի սահմանված պահանջին չհամապատասխանելու հիմքով, դադարեցրել են ուսուցչական գործունեությունը՝ պահպանելով ուսուցչի աշխատանքը վերսկսելու համար օրենսդրությամբ սահմանված երկու եղանակներից որեւէ մեկից օգտվելու հնարավորությունը, այն է՝ բարձրագույն կրթություն ստանալու կամ կամավոր ատեստավորման հետագա փուլին մասնակցելով՝ սահմանված շեմը հաղթահարելու տարբերակները:

ԿԳՄՍ նախարարությունը մշակել է վերոնշյալ ուսուցիչների օժանդակության ծրագիր, որի նպատակը բարձրագույն կրթություն չունեցող եւ «Հանրակրթության մասին» օրենքի համաձայն մանկավարժական աշխատանքը դադարեցված ուսուցիչների հետագա մասնագիտական գործունեության շարունակականությանն աջակցելն է՝ խրախուսելով մասնագիտական զարգացումը եւ նպաստելով ուսուցիչների թափուր տեղերի համալրմանը:

Ըստ այդմ՝ ծրագրի շահառու հանդիսացող անձը, որի մասնագիտական գործունեությունը դադարեցվել է 2023 թվականին, կարող է՝

● կրթություն ստանալ ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում կամ շարունակել այն ընդհատված լինելու դեպքում: Բարձրագույն կրթություն ստանալու համար ծրագրի շահառուի՝ տվյալ կիսամյակի ուսման վարձը կարող է փոխհատուցվել պետության կողմից այդ նպատակով բուհին համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում: Հետագա կիսամյակների ուսման վարձի փոխհատուցումը դադարեցվում է, եթե շահառուն չի ապահովում առնվազն 60 % ՄՈԳ կամ դադարեցնում է ուսումնառությունը:

● Կամավոր ատեստավորման նպատակով մասնակցել առարկայի իմացության համար սահմանված վերապատրաստմանը: Նախարարությունն օրենսդրության համապատասխան կազմակերպում է վերջիններիս վերապատրաստումը՝ այդ նպատակով պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակում:

Նախագծով սահմանվել է, որ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու կամ կրթությունը շարունակելու, ինչպես նաեւ կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար առարկայի իմացության վերապատրաստում անցնելու դիմումների ներկայացման ժամկետը երեք ամիս է՝որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԹԱՆԿԱՆԱԼՈՒ Է

Մայրաքաղաքում քաղաքային տրանսպորտն իսկապես թանկանալու է: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ տեղեկությունը փետրվարի 6-ի ասուլիսում հաստատեց Երեւանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը՝ նշելով, որ գնային փոփոխությունը նախատեսվում է կիրառել այս տարվա սեպտեմբերից:

Փոխքաղաքապետը հայտնեց, որ գործելու են սակագնային տարբեր փաթեթներ, ուստի դժվարացավ նշել թանկացման հստակ չափը: Գրիգորյանը, սակայն, հայտնեց, որ 60 ուղեւորության հաշվարկով ամսական (խոսքը օրացուցային 30 օրվա մասին է) տոմսի համար այլ տարբերակով անհրաժեշտ է լինելու վճարել 11 000, իսկ Telcell համակարգով վճարելիս՝ 10 հազար 800 դրամ: Նմանապես, եռամսյակային եւ տարեկան տոմսերն արժեւանալու են համապատասխանաբար 25 եւ 24,8 ու 110 եւ 108 հազար դրամ: Ըստ այդմ՝ մեկ ուղղությամբ տրանսպորտային մեկ միջոցով ուղեւորության արժեքը դառնալու է 180 դրամ՝ ներկայիս 100-ի փոխարեն: Իսկ, օրինակ, 70-րոպեանոց մեկ տոմսով անձը նշված ժամանակահատվածում կարող է օգտվել մի քանի տրանսպորտային միջոցից:

Գրիգորյանը նշեց, որ թանկացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայիս սակագինը չի փակում տրանսպորտի ձեռքբերման եւ շահագործման ինքնարժեքը, որն առաջացնում է պետական միջոցներից այն սուբսիդավորելու անհրաժեշտություն: Գրիգորյանի պնդմամբ՝ ներկայումս տրանսպորտի շահագործման ինքնարժեքը մեկ մարդու հաշվարկով 200-230 դրամի սահմանում է: Ենթադրվում է, որ տրանսպորտի թանկացման դեպքում հնարավոր կլինի ավելի շատ գումար ուղղել Երեւանում այլ նախագծերի իրականացմանը:

Նրա հավաստիացմամբ՝ տոմսային նոր համակարգի ներդրումը հնարավորություն կտա նաեւ «ամբողջը բերել թվային դաշտ, հաշվետվությունների դաշտ, քանի որ հանրային տրանսպորտի տիրույթում գոյություն ունի ոչ փոքր չափի ստվերային շրջանառություն»: Միաժամանակ, ինչպես նշեց Սուրեն Գրիգորյանը, նոր մոտեցումը հնարավորություն կտա կուտակել անհրաժեշտ չափի գումար, որպեսզի, օրինակ, 10 տարի հետո հնարավոր լինի առանց այլ միջոցների ներգրավման հին ավտոբուսները փոխարինել նորով:

Նախատեսվում է, որ նորամուծությունը կսկսի գործել 2024 թվականի սեպտեմբերից՝ 8,6 մետր երկարությամբ 171 նոր ավտոբուսներ ձեռք բերելուց հետո:

Հայտարարվեց, որ նախագծի քննարկումը ներառված է ոչ թե վաղվա արտահերթ նիստի, այլ փետրվարի 13-ին նախատեսված նիստի օրակարգում:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հայաստանն ու Իրանը, որոնք հարուստ պատմություն ու մշակույթ ունեցող երկրներ են, իրենց բարեկամական հարաբերություններն ամրապնդում են մշակույթի, կրթության եւ այլ բնագավառներում: Դրա մասին են վկայում բազմաբովանդակ ծրագրերը, որոնք իրականացնում է Հայաստանում Իրանի դեսպանության մշակույթի կենտրոնը Երեւանում եւ մայրաքաղաքից դուրս:

Կենտրոնի ղեկավար Մուհամմեդ Ասադի Մովահեդը մանրամասներ է հայտնել 2024 թվականին երկու երկրների միջեւ մշակութային, կրթական կապերի զարգացմանն ուղղված ծրագրերի մասին՝ հավաստիացնելով, որ այդ նախաձեռնությունները շարունակական են լինելու:

Իրանի Իսլամական հեղափոխության 45-րդ տարեդարձն ու լուսավորության շրջանը

«Մեր հանդիպումը զուգադիպել է Իրանի Իսլամական հեղափոխության 45-րդ տարեդարձի հետ, հեղափոխություն, որն իրականացվել է Իմամ Խոմեյնիի գլխավորությամբ: Մուհամմեդ Ասադի Մոհավեդի խոսքով՝ հեղափոխությունը լուսավորություն էր բերում, իսկ գիտությունն ու կրթությունը լույս են սփռում:

«Քառասունհինգ տարվա ընթացքում մեր երկիրը տարբեր ոլորտներում ձեռքբերումներ է ունեցել, սակայն դրանց գերակշիռ մասը մշակույթի, գիտության եւ արվեստի բնագավառներում են:

Հեղափոխությունից առաջ կին աշակերտների, կին ուսանողների թիվն Իրանում բավականին փոքր էր, սակայն ներկայումս համալսարաններում սովորող կին ուսանողների թիվը 58 տոկոս է կազմում: Իրանի Իսլամական Հանրապետությանն ուղղված բացասական պրոպագանդայի թեզերից մեկն այն էր, որ կինը մնում էր լուսանցքում, սակայն այսօր կինը գիտակրթական ոլորտում յուրահատուկ տեղ ունի: Մինչ հեղափոխությունը մեր երկրում գիտակրթական կենտրոնների քանակը 128 էր, իսկ այսօր 2700 բարձրագույն կրթական կենտրոն կա Իրանում»,- նշում է կենտրոնի ղեկավարը:

Գրականությունն ու թարգմանական արվեստը՝ հայ-իրանական հարաբերությունների զարգացման հիմքում

Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի կենտրոնի ղեկավարը նշում է՝ հայ ժողովուրդն ու հայ հասարակությունը մշակութասեր, արվեստասեր է, ուստի իրենք Հայաստանում տարբեր մշակութային ծրագրեր են իրականացնելու: Կարեւորագույններից մեկը գրքերի տպագրությունն է: Ծրագրերից մեկը, որին հետամուտ են, Հայաստանում տպագրված գրքերի, տարբեր հետաքրքիր ստեղծագործությունների թարգմանությունն է պարսկերեն եւ պարսկերեն գրականության թարգմանությունը հայերեն:

«Մենք համոզված ենք, որ երկու երկրների գրական գործերի թարգմանությունը միայն կհանգեցնի երկու ժողովուրդների հարաբերությունների ամրապնդմանը: Իրանում թարգմանական կենտրոն կա, եւ մենք աջակցում ենք այն բոլոր հայ թարգմանիչներին, որոնք կարող են պարսից գրականությունը հայերեն լեզվով թարգմանել ու ներկայացնել ընթերցողներին: Թարգմանվում են ոչ միայն դասականների՝ Սաադիի, Ֆիրդուսիի եւ այլ հեղինակների, այլեւ ժամանակակից ստեղծագործողների գործերը: Իմ ձեռքի տակ եղած վիճակագրության համաձայն՝ պարսկերենից հայերեն է թարգմանվել եւ տպագրվել ժամանակակից հեղինակների քսան գիրք: Գրքերից մեկը, որ վերջերս է թարգմանվել, մանկական է եւ անդրադառնում է բնապահպանության թեմային, իսկ փետրվարի 16-ին Կապույտ մզկիթում տեղի կունենա Հաֆեզի հայերեն թարգմանված գրքի շնորհանդեսը, որը հրատարակել է «Զանգակ»-ը:

Համատեղ ֆիլմարտադրություն, թատերարվեստ եւ ցուցադրություններ

Շուտով Հայաստանից արվեստագետների մի խումբ է մեկնելու Իրան՝ մասնակցելու «Ֆաջր» 42-րդ կինոփառատոնին: Նախատեսվում է իրանական կինոյի շաբաթներ անցկացնել Հայաստանում, համատեղ կինոարտադրություն սկսել Իրանի եւ հայ արվեստագետների մասնակցությամբ, կլինեն համագործակցություններ նաեւ թատրոնի բնագավառում: «Ֆաջր» նշանակում է լույսի պոռթկում, լույսի պայթյուն, այգաբաց: «Ֆաջր»-ը տասնօրյակի անվանում է, այն փետրվարի 1-ից 11-ն ընկած ժամանակահատվածն է, որ նշում են որպես Իրանի Իսլամական հեղափոխության հաղթանակի օրեր: Այդ անվանմամբ ոչ միայն կինոփառատոն, այլեւ թատերական, մանկական փառատոններ կան: Կենտրոնի ծրագրերից մեկը Հայաստանում մանկական թատերախմբի ստեղծումն ու մանկական թատրոնի շաբաթի անցկացումն է Երեւանում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը Եվրոպայի առաջնությունից առաջ երեք նախապատրաստական փուլ է անցել:

«Եվրոպայի առաջնությունը վարկանիշային չի լինի Փարիզի օլիմպիական խաղերի համար: Վարկանիշային երկու մրցաշար ունենք, որոնցից մեկը կկայանա Բաքվում, մյուսը՝ Ստամբուլում, սակայն դեռեւս հստակ չէ մեր մասնակցությունն այս մրցաշարերին: Ամեն դեպքում, պատրաստվում ենք բոլոր մրցաշարերին»,- «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ լրագրողների հետ զրույցում ասաց Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Արմեն Բաբալարյանը:

Մասնագետի խոսքով՝ Եվրոպայի առաջնությանը մասնակցում են օլիմպիական ուղեգիր նվաճած մարզիկները, քանի որ ԵԱ-ն նրանց համար նախապատրաստական փուլերից մեկն է:

«Մենք մինչ Եվրոպայի առաջնությունն անցել ենք երեք փուլ, սակայն չեմ կարող ասել, թե էլ քանի ուղեգիր կարող ենք նվաճել Փարիզի օլիմպիական խաղերի համար»,-ասաց նա:

Եվրոպայի առաջնությանը կմասնակցեն Մանվել Խաչատրյանը (55 կգ), Գեւորգ Ղարիբյանը (60 կգ), Հրաչյա Պողոսյանը (63 կգ), Սլավիկ Գալստյանը (67 կգ), Աշոտ Խաչատրյանը (72 կգ), Մալխաս Ամոյանը (77 կգ), Կարեն Խաչատրյանը (82 կգ), Գեւորգ Թադեւոսյանը (87 կգ), Արթուր Ալեքսանյանը (97 կգ), Դավիթ Օվասապյանը (130 կգ):

Առաջնությունը կկայանա Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում փետրվարի 12-18-ը:

ԿԳԼԽԱՎՈՐԻ

Բասկետբոլի Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությունում Հայաստանի մինչեւ 18 տարեկանների հավաքականը կգլխավորի Սեւակ Քեթենջյանը:

Այս մասին հայտնում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան: Քեթենջյանը Բեյրութի Հ.Մ.Ը.Մ.-ի նախկին բասկետբոլիստ է: 2018 թվականին նա դարձել է Լիբանանի առաջնության չեմպիոն եւ գավաթակիր:

Որպես մարզիչ 2022-2023 թվականներին ընդգրկված է եղել Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականների մարզչական շտաբում՝ օգնելով Ջորիկ Իսաջանիին:

2023 թվականին մասնակցել է ՖԻԲԱ-ի Եվրոպայի մարզչական վկայականի հատուկ ծրագրին: Եվրոպայի C դիվիզիոնի առաջնությունը տեղի է ունենալու հուլիսի 23-28-ը Ալբանիայում:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի ազգային հավաքականը մարտին եւ հունիսին 2 ընկերական հանդիպում կանցկացնի Երեւանում:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Մարտի 22-ին Հայաստանի ազգային հավաքականը կհյուրընկալի Կոսովոյի ընտրանուն, իսկ հունիսի 7-ին կմրցի Ղազախստանի հավաքականի հետ:

Երկու հանդիպումներն էլ կկայանան Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում:

Հայաստանի ազգային հավաքականը մարտի 26-ին կհյուրընկալվի Չեխիայի, իսկ հունիսի 4-ին՝ Սլովենիայի ընտրանիներին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՅՈՒՄ

Գ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 45/2 հասցեում գտնվող 437,1 ք.մ. շինություն եւ 0,05633 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 241000000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 23.02.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 22.03.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 247010337415000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● Ապրիլի 18-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի կունենա «Մանուշակ Շիրինյան. «Պոեզիայի արահետներով»» պոեզիայի երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-7000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք: Ուզում եմ իմանալ՝ կա արդյոք այդ գույքը անձի սեփականությունը լինելու որոշակի ժամանակահատվածի դահանջ:

Հարություն Կիրակոսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Կիրակոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով՝ ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք՝ ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան եւ տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում եւ ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան ՀՀ ժամանելը: Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան ՀՀ ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան ՀՀ-ում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 250-րդ հոդվածի դրույթներով՝ սահմանված ժամկետը խախտելու դեպքում Միության անդամ երկրների ռեզիդենտ ֆիզիկական անձինք կրում են այնպիսի պարտավորություններ, որոնք սահմանված են Միության եւ ՀՀ օրենսդրությամբ ավտոմեքենան ՀՀ ներքին սպառման նպատակով ներմուծելու համար:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչ է հողամասի կառուցապատման իրավունքը:

Ռոման Գրիգորյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Հայաստանի Հանրապետության կառավարության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հողի տիրապետումը, օգտագործումը եւ տնօրինումը չպետք է վնաս պատճառի շրջակա բնական միջավայրին, երկրի պաշտպանունակությանն ու անվտանգությանը, չպետք է խախտի քաղաքացիների եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

86 տարեկանում կյանքից հեռացել է աշխարհի ամենաբարձր գագաթը բարձրացած հայ լեռնագնաց Լեւ Սարկիսովը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-4 -7 +1 +6
Կոտայքի լեռներ	0 -3 -2 +2
Կոտայքի նախալեռներ	-1 +1 +6 +9
Գեղարքունիք	-2 -6 0 -2
Լոռի	-1 +2 +5 +9
Տավուշ	+3 +7 +5 +8
Արագածոտնի լեռներ	-8 -11 -1 +1
Արագածոտնի նախալեռներ	-2 +2 +6 +10

Արարատ	0 +2 +10 +12
Արմավիր	-1 +1 +10 +12
Վայոց ձորի լեռներ	-3 -5 -1 +1
Վայոց ձորի նախալեռներ	+2 +4 +10 +15
Սյունիքի հովիտներ	+6 +10 +18 +20
Սյունիքի նախալեռներ	+2 +6 +12 +15
ԼՂՀ	+2 +6 +10 +13
Երեւան	+6 +8 +12 +14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.2.2024**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*